ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«17» սեպտեմբերի 2018 թվականի № 114-Ն

«ԴԵՄԵՐ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի օգոստոսի 16-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 68 և 2018 թվականի մարտի 26-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 664 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «ԴԵՄԵՐ» ՍՊ ընկերության 2018թ. փետրվարի 9-ի թիվ ԱՀ-03 գրությունը, և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ԴԵՄԵՐ» ՍՊ ընկերության՝ ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Դեմեր տեղամասում արդյունահանում կատարելու համար 2012թ. հոկտեմբերի 20-ին վերաձևակերպված ընդերքօգտագործման իրավունքում (ՇԱԹՎ-29/068 ՊՎ-068 ԼՎ-068) կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2048թ. օգոստոսի 24-ը,
   2) Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 3500մ^3 արդյունահանվող պաշար
   3) Տրամադրվող պաշարների քանակը՝ 109800մ^3 ըստ A կարգի,
   4) Ընդերքօգտագործման պայմանագրում՝ «բլոկների ելքը 34.42%» բառերը փոխարինել «բլոկների ելքը 23%» բառերով
2. Ընդերքի գործակալության պետին՝

1) Ապահովել «ԴԵՄԵՐ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում (ՇԱԹՎ-29/068 ՊՎ-068, ԼՎ-068) համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ